ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Տ. Առաջնորդի թեմին Հայոց Պարսկա-Հնդկաստանի, ընդ որում յղեցաւ ցուցակ նիւթոց սրբալոյս միւռոնի վասն գնելոյ և առաքելոյ զայնս ի Մայր Աթոռս ցվախճան փետրուարի յառաջիկայ 1910 ամի։ Նոյեմբ. 13. Թ. 439.

— Յանուն միաբանի Մայր Աթոռոյ Տ. Երուանդ վրդպտի., որով, ըստ խնդրոյ իւրում, ազատ կացուցաւ ի պաշտամանց տեսչի և պատասխանատու անձին տպարանի Մայր Աթոռոյ։ Նոյեմբ. 15. Թ. 446.

— Յանուն միաբանի Մայր Աթոռոյ Տ. Ներսէս վրդի. Տէր Միքայէլեան, որով կարգեցաւ պատասխանատու անձն տպարանի Մայր Աթոռոյ։ Նոյեմբ. 15. Թ. 447.

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով տուաւ տեղեկութիւն զկարգմանէ խմբագրի «Արարատ» ամսագրի, տեսչի և պատասխանատու անձին տպարանի Մայր Աթոռոյ։ Նոյեմբ. 15. 448.

— Յանուն եկեղեցական խորհրդոյ հայոց Ս. Պետերբուրգի վասն տալոյ Պ. Երուանդայ Լալայեան զ100 ռ. յամիսն յարդեանց եկեղեցեաց առ ի ժողովել զհնութիւնս և կարգաւորել և ճոխացուցանել զթանգարան Մայր Աթոռոյ հնութեամբք։ Նոյեմբ. 20. Թ. 483.

— Յանուն Տ. Ներսէս Եպիսկոպոսի Խարախանեան Առաջնորդի թեմին Հայոց Տարօնոյ վասն ձեռնադրութեան նորա յատուկ եպիսկոպոսութեան։ Նոյեմբ. 22. Թ. 486.

— Յանուն նախագահի կենտր. վարչութեան երեսփոխանական և խառն ժողովոց Հայոց Կ. Պոլսոյ վասն բարեբերելոյ զվիճակ Աղթամարայ վանաց։ Նոյեմբ. 22. Թ. 497.

— Յանուն անդամոյ Սինոդի ս. Էջմիածնի Տ. Մեսրոպ եպիսկոպոսի Տէր Մովսիսեան վասն ձեռնադրութեան յաստիճան եպիսկոպոսութեան։ Նոյեմբ. 25. Թ. 499.

— Յանուն ժամ. կառավարչի թեմին Հայոց Ատրպատականի Տ. Մխիթար եպիսկոպոսի Տէր Մկրտչեան վասն ձեռնադրութեան յաստիճան եպիսկոպոսութեան։ Նոյեմբ. 25. Թ. 500.

— Յանուն առաջնորդի թեմին Հայոց Ատրպատականի Տ. Կարապետ եպիսկոպոսի Տէր-Մկրտչեան վասն ձեռնադրութեան եպիսկոպոսութեան։ Նոյեմբ. 25 Թ. 501.

— Յանուն Ամեն. Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ, որով տուաւ տեղեկութիւն զկարգընկէց առնելոյ զգաղթական Խաչատուր քահանայն Տէր Յարութիւնեանց։ Նոյեմբ. 27. Թ. 510.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով տուաւ տեղեկութիւն վասն կարգընկէց առնելոյ զգաղթական Խաչատուր քահանայն Տէր Յարութիւնեանց և առաջադրեցաւ տալ գիտել թեմական Առաջնորդաց։ Նոյեմբ. 27. Թ. 512.

— Յանուն Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի վասն վերաբանալոյ զաղքատանոցն Գանձակ քաղաքի եղեալ դրամագլխով նորին։ Նոյեմբ. 27. Թ. 524.

— Յանուն Առաջնորդի Հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ, որով թոյլ տուաւ Մկրտչի Լուսախանեանց կառուցանել զեկեղեցի Հայոց Ծախիւր իւրովք ի Բելց քաղաքի։ Նոյեմբ. 29. Թ. 536.

— Յանուն Առաջնորդի թեմին Հայոց Տարօնոյ Տ. Ներսէս եպիսկոպոսի Խարախանեան, որով առաջադրեցաւ տալ որոշել զգեռին վասն չինութեան վարժարանի ըստ կտակի Հանգուցեալ Մարգարայ Պօղոսեան և տալ ընտրել վերստուգիչ Յանձնաժողով հաշուոց։ Դեկտ. 4. Թ. 555.

— Յանուն առաջնորդական Տեղապահի Հայոց Ամերիկայի Տ. Պողոս վարդապետի Դաւթանեան և կենտրոն.

վարչութեան, որով պահանջեցան այլ և այլ տեղեկութիւնք ի թեմէն։ Դեկտ. 9. թ. 588.

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով տուաւ տեղեկութիւն զկարգմանէ Տ. Խորէն վարդապետի Մուրադբէգեան փոխ-թեմական Հայոց Երևանայ և առաջադրեցաւ տնօրինել զարժանն վասն յանձնելոյ նմա զպաշտօնն։ Դեկտ. 13. թ. 610.

— Ցանուն Տ. Խորէն վարդապետի Մուրադբէգեան, որով կարգեցաւ փոխ թեմական Հայոց Երևանայ։ Դեկտ. 13. թ. 611.

Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ Ցանուն Պօղոս Փաշայի Նուպար վասն շնորհաւորութեանցն։ Նոյեմբ. 11. թ. 527.

— Ցանուն եկեղեցական խորհրդոյ Հայոց Ս. Պետերբուրգի վասն նուիրաբերութեան նկարի հանդիսի թափորի վերացման Ս. Խաչի ի Մայր Աթոռի, զոր նկարեալ է Պ. Վարդգէսն Սուրէնեանն։ Նոյմբ. 19. թ. 570.

— Ցանուն Տիկին Տիրուհւոյ Կարապետեան Պօղովեան վասն յղեալ 7512 ռ. 50 կոպ. տոկոսեաց 50,000 ռ. դրամագլխոյ կտակի հանգուցեալ ամուսնոյ նորին և յաջագս ջանիցն իրագործման կտակի ամուսնոյն. յիշատակեալ 7512 ռ. 50 կոպ. գումար տոկոսեացն յատուկ արձանագրութեամբ եղեալ է ի պահ ի գանձարանի Մայր Աթոռոյ ցտնօրէնութիւն։ Նոյեմբ. 19 թ. 571.

— Ցանուն Ղևոնդ քահանայի Աթանասեանց և Խաչատրոյ և Սիմաւոնի Աթանասեանց վասն նուիրաբերելոյ առաջնոյն յօգուտ եկ. ծխ. դպրոցին Մեծ Արիվալի գեղջ ի տարին զ25 ռ. և նուիրաբերելոյ նոցա զշինութիւն դպրոցին եկեղեցւոյ գեղջն և առհասարակ ջանալոյ ի պահպանութիւն դպրոցին։ Նոյեմբ. 20. թ. 583.

— Ցանուն Ամբրահամու Տէր-Մկրտչեան Աթանա-

սեանց վասն նուիրաբերելոյ յօգուտ եկ. ծխ. դպրոցին Մեծ Արխավալի գեղջ ի տարին զ10 ռ.։ Նոյեմբ. 13. Թ. 584.

Հայրապետական Պարգեւ.

Կոնդակ յանուն Ներսէս քահանայի Ղոնչէկուլեան Տօպրիչ քաղաքի Բուլղարիոյ, որով շնորհեցաւ իրաւունք կրելոյ ի կուրծս զքահանայական լանջախաչ ի տրիտուր ջանիցն վասն պահպանութեան վարժարանի քաղաքին և նորոգութեան եկեղեցւոյն։ Նոյեմբ. 22. Թ. 589.

ՍԻՆՈԴԻ ՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ

Նոյեմբ. 2-ին. Սինոդը լսեց եղեկլիա Աքովեանի և և Յովհաննէս Խոջաէյնաթեանի խնդիրները, որով նրանք խնդրում էին նշանակել իրանց կառավարիչ Մարցոյ անտառին և որոշեց՝ մերժել նրանց խնդիրը, որովհետև նրանք անտառապահութեան գործին մասնագէտ չեն։ Թ. 662.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Ստեփան սարկաւագ Մելիքեանի խնդիրը կուսակրօն հոգևորականութիւնից արձակելու մասին, որոշեց՝ ի նկատի ունենալով, որ Ստեփան (Նոյն և Սպիրիդոն) սարկաւագ Մելիքեանը բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով ստացել է 2875 ռ. նպաստ, որը նա չի կամենում վերադարձնել, նախ՝ պատուիրել Վրաստանի թեմի Առաջնորդին, որ արուի պատշաճ կարգադրութիւն, որպէս զի Ստեփան սարկաւագն կուսակրօն հոգևորականին պատշաճ զգեստ կրի և երկրորդ՝ բռնել իւրաքանչիւր ամիս նրա ռոճկի 1/5 մասը մինչև 2875 ռ. նպաստի լրանալը և երրորդ՝ յայտնել նորան, որ իր հոգևոր կոչումից ազատելու խնդիրը կը լուծուի միայն այն ժամանակ, երբ կատացուի նրան տուած ամբողջ նպաստի գումարը։